

## ՀԱՏԱԵԿԱՆ ԲՈՐՔ

ԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՎԵԱԾ ՏՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ՆԵՐԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ.

**Հաստակ.**—Սիսիանում աղջիկ երիտասարդութիւն չկայ, որովհետև շատ մտադր հաստակումն են ամուսնացնում: Ուժի կամ ինն տարեկան ժամանակ նրան արդէն նշանում են և տասն կամ տասնեւմէկին՝ պատակում: Սռաջները տղաներին էլ էին ալսպէս փոքրահաստակ պատակում, բայց զինուորագրութիւնը հայերիս մէջ մտնելուց յետով՝ շատ շատերը սպասում են մինչև վիճակ հանելը: Սակայն անդրանիկ որդիները, զինուորական ծառայութիւնից ազատուելու արտօնութիւնն ունենալով՝ շարունակում են նախկին կարգով վարուել:

Պատահում է, մանաւանդ առաջները, որ բոլորովին մանկական հասակումն են նշանում միմեանց հետ։ Այս հին սովորութիւնը, որ տեղական բարբառով «օրօրոց խազիչ» է կոչում—օրովհետև նշանելիս օրօրոցների վրայ գտնակով մի մի խազ (գիծ) են անում - ալժմ միայն այն դէպքերումն է գործ գրւում, եթի մի ծնողի արու գաւակները չեն ապրում։ Յուսալով, թէ աղջկայ բախտող կտրող է ապրեցնել երեխային՝ նշանում են նրան։ Պատահում են նաև դէպքեր, որ նշանում են ալգակս վաղ՝ ցանկանալով օր առաջ բարեկամանար։ Հազիւ է պատահում, որ նշանուածները մեծանա-



Կամբ ԱՄՈՒՆՈՒՆ ՔԵՐ Հ ԱՐԱԽ

միս միմեանց չառնէին։ Ժողովուրդը նոյնշտի գատապարտում է ալսպիսիներին՝ որչափ նրանց, որոնք մեծ հասակում նշանուել և յետ են եղել։

Ընդհանրապէս ալսպէս փոքր հասակում նշանելու և պստիելու պատճառով է, որ Սիսիանում սիրտհարութիւն, աղջիկների յետեկից ման գալ, աղջիկ փախցնել չէ պատահում<sup>\*)</sup>։

Ամուսնացնելիս հաս են համարում արիւնակցութեան վեց և խնամութեան հինգ աստիճանները։ Սակայն պատահում է, որ աւելի մօտ աստիճաններումն էլ են ամուսնում։ Երբ չեն կարողանում որևէ հնարքով ստանալ օրինաւոր ամուսնութեան թոյլտութիւն՝ դիմում են թոնրի պատիկն և կամ ապօրինի կնապահութեան։ Թոնրի վրայ պսակուելիս՝ թոնրի շուրթը մոմեր են վառում, հարս ու թագուրորին կանգնեցնում նրա երկու կողմում, և քահանան կատարում է պսակի խորհուրդը։ Ապա նորապսակները չոգում, համբուրում են թոնրի շուրթը և յետ-յետ գնալով հեռանում, մէջքերը թոնրին զգարձնելով, որով թոնիրը անպատուած կը լինէին<sup>\*\*</sup>)։

Ալժմ ալսպիսի պսակներ շատ հազիւ են պատահում։ ակայն ալսպէս պսակուածներ կան, որոնք հէնց ալժմս էլ պնդում են, թէ մթոնիրը եկեղեցուց բարձր է, քանի որ, ասում են նրանք, նա մեզ կերակրում, տաքացնում և մաքրում է։

Աղջիկ ուզել. — Առաջներում աղջիկայ ընտրութեան հոգսը միանգամայն երիտասարդի մօր վրայ էր թողնուած։ Նա էր ընտրում, առաւելապէս ուշադրութիւն դարձնելով աղջիկայ մօր և բարեկամների բարի յատկութիւնների վրայ։ Ալժմ

\*.) Սրա անմիջական հետեանքն էլ ալն է, որ Սիսիանում ժողովրդական սիրտալին երգեր չափից դուրս քիչ կան։ Այս միայն լուրաձորում կարողացալ հաւաքել վիճակի երգեր, որոնց մեծագուն մասը խնձորեսկից և ուրիշ տեղերից բերուած հարսներն են ասել։

\*\*) Նոյն առվորութիւնը եղել է և Վարանդպատում։ Ցես Աղջանդէս. թ. գիրք. եր. 116.

թէւ վերջնական որոշումը գարձեալ նրանից և ամուսնուց է-կախուած՝ բայց և այնպէս հարցնուում է տղայի յօժարութիւնը: Բայց այս յօժարութիւնը շատ փոքր նշանակութիւնունի, այնպէս որ պատահում են գէպքեր, երբ տղային նշանում են նրա բացակայութեան ժամանակ, առ անց նրան իմաց տալու: Երբ մի դեղեցիկ օր տղան պանդիտառութիւնից վերադառնում է՝ մալրը պատմում է նրան նրա նշանածի մտսին, գովում է նրան և այլն, և տապուռն երեսին», «Հա-լալ կաթնակեր» տղային մնում է՝ միայն համբուրել մօրձեռքը և շնորհակալ լինել նրա անչափ հոգատարութեան համար:

Երբ հարսնացուն ընտրուած է՝ նրան նշանում են:

Նշանադրութիւնն. — Նախտապէս աղջկալ ծնողների համա-ձայնութիւնը առնելուց յետոյ՝ երիտասարդի մալրը կամ մի մօտիկ ազգական Ծաղկազարդի օրը, երբ գիւղի ըոլոր աղ-ջիկները եկեղեցի են գալիս՝ մի մոմ է տալիս ուզած աղջկալ ձեռքը և մի շարդաթ ձգում գլխին: Ալինուհետև նա նշա-նուած է համարւում:

Եւ կամ տղայի մալրը մի ծերունու և կամ մի կնոչ խնամախօս է ուղարկում աղջկալ մօր մօտ:

Երբ խնամախօսը ներս է մտնում՝ աղջկալ մալրը աչ-քով է անում աղջկան, և սա ամենալին եռանգով աւելում է արդէն իսկ աւելած տունը, մի կապերտ և մի ներքնակ ձը-գում, մի բարձ դնում և սպասում՝ որ մալրը հրաւիրէ խնամախօսին նստելու: Ապա ջրի ամանը վերցնելով՝ արա-գութեամբ աղբիւրն է սլանում, շուտով գառնում, ջուրը վալր դնում, օջաղը վառում: Այս միջոցին խնամախօսը խօ-սելով նրա մօր հետ՝ աշքի տակով շարունակ աղջկան է գի-տում: Վերջապէս բռն հարցին անցնելով՝ ասում է. «Եկել ե ճրագիցգ ճրագ վառեմ»:

Աղջկալ մալրը անմիջապէս խօսք չէ տալիս, այլ խըն-դրում է թոյլ տալ մի քանի օր խորհրդածելու: Անմիջա-պէս կանչւում է աղջկալ մօրեղբալրը և ծնողների հետ խօր-հրդածում տալու կամ չտալու մասին: Եթէ ուրիշ, աւելի

բարձր տեղից աչք ունին ալդ աղջկայ վրայ՝ սրա ծնողները անմիջապէս մի կին են ուղարկում նրանց մօտ ասելու. Եթէ ուզելու էք՝ շտապեցէք, ապա թէ ոչ՝ ալս ինչն արդէն ուզել է, կը տանք նրան:

Մի քանի օրից տալիս են իրենց համաձայնութիւնը. այն ժամանակ միջնորդ կինը նորից է գուլիս և ասում.

«Ե՞րբ գանք ձեր բարի օջապէն մին ճրագ կացնենք»:

Աղջկայ մայրը խոստանում է զուտով պատասխանել:

Պէտք է ասել, որ միջնորդ կինը կամ ծերունին ամեն մի զնալիս մի շիշ օղի նուէր է տանում, իսկ աղջկայ ծնողները նրան պատուելու համար հաց են տալիս:

Թեարզեան. — Հարսնացուի ծնողաց նշանակած երեկոյին փեսացուի հալրը կամ աւագ եղբայրը, մի-երկու բարեկամի հետ գնում է հարսնացուի տունը, տանելով մի խնձոր՝ մէջը մի արծաթ ըստրանոց և մի մատանի խրած, ինչպէս նաև մի կուլտ գինի և մի շիշ օղի:

Հարսնացուի հոլըն էլ մի-երկու մօտիկ բարեկամ է հրաւիրած լինում. որոնց հետ խօսակցելով՝ ժամանակ են անց կոցնում և վերշիվերջոյ ընթրում. Ընթրիքի աւարտին փեսացուի հալրը կամ եղբայրը, մի խօսքով տէրը \*), հանում է մատանեկիր խնձորը և տալիս հարսնացուի տիրոջ՝ ասելով. «Համեցիք, Աստուած շնորհաւոր անին. Սա ընդունում է և շնորհաւորութեան մի բաժակ գինի խումում. Բոլորը հետևում են նրան. Ապա աղջկայ տէրը ուզելով իւր խօսքը տղայի տիրոջը՝ ասում է. «Մի ոչխար կամ խոր, մի գլուխ շաքար, մի ֆունտ թէլ, քսան փարչ գինի, հինգ փարչ օղի պիտի բերես, որ մեր բարեկամութիւնը հաստատուի, քու բարեկամներն էլ, մերն էլ գան իմանան»:

\* ) Հարսնացուի կամ փեսացուի հալրը, կամ եթէ վերջինս մեռած է՝ նրան փախարինող՝ աւագ որդին, որ տան միջն է համարաւում՝ ժողովրդի կոչումով անուանուում են աէր, արագէս օր. Հարսնացուի տէր, փեսացուի աէր, նրբ մինը բալորովին մշակնակ է՝ ամուսնանալիս մինին խնդրում է, որ իրեն առէր լինի, պրակէս:

Տղայի տէրն ալս պահանջների դէմ ոչինչ չէ ասում և սիրով պատրաստականութիւն է ցոյց տալիս. ստկալն շատ հազիւ է պատահում, որ լիովին կատարէ. միշտ մի քանի բան պակաս է ուղարկում. Պատահում էլ է, որ աղջկալ տէրը գժգոհ մնալով ուղարկուածից՝ յետ է դարձնում և պահանջում է լրացնել:

Բուն նշանղրէք.—Մի քանի օր յետոյ փեսացուի տէրը կէսօրին մօտ իւր տնեցիներից մինի ձեռքսվ ուղարկում է հարսնացուի տունը՝ ինչ օր հարսնացուի տէրը բետքեահի երեկոյին պահանջել էր. Յետոյ հրաւիրում է իւր բարեկամ տղամարդկանց և կանանց. Եւ մինչդեռ թէլ են խմում հարսնացուի տանից մինը գալիս է և սրանց բոլորին հրաւիրում հարսնացուի տունը՝ Բոլորը վեր են կենում և գնում։ Փեսացուն կամ բոլորովին չէ զնում և կամ միւսներից քիչ յետոյ է գնում և մի առանձին սենեակում մնում։

Հարսնացուի տէրը գիմաւորում է փեսացուի հօրը և ասում.

«Եեր ստամուտը բարի լինի»:

— «Աստուած տալ միմեանցից ամօթալի չմնանք», պատասխանում է փեսացուի տէրը։

Ապա մտնելով տունը՝ աւագութեան կարգով նստում են. առաջին տեղը պատկանում է քահանալին, որ գալիս է փեսացուի կողմից. Անմիջապէս մի-մի բաժակ օղի են հրամցնում, որ խմում են երկար բարեմաղթութիւններ անելով։ Ապա մատուցանում են թէլ \*) և յետոյ էլի օղի. Վերջապէս նստում են հաց ուտելու. Այս ժամանակ անշուշտ առաջարկում են «ջուխտ օջաղի» կենացը. Ընթրիքից յետոյ առաջ են բերում փեսացուի տնից ուղարկուած մատանին։ Քահանան օրհնում է նշանը և տալիս, որ տանին տան աղջկան։

Նըր պատրաստում են զնալու՝ խնդրում են «հարսնացուն վեր բերելու» Խսկոյն մի հարսի առաջնորդութեամբ,

\*) Թէլի գործածութիւնը վերջին ժամանակներս է մտել.

երեսը շարդաթով ծածկոծ, առաջ է գալիս հարսնացուն և հետևելով առաջնորդ հարսին՝ համբուրում է բոլորի ձեռները, աւագութեան կարգով։ Սրանք էլ հարսի բուռը դնում են 20—30 կոպէկ։ Այս գումարից մինչև մի բուրլի տալիս են քահանալին, մի քանի կոպէկ էլ առաջ բերող հարսին, իսկ մնացածը՝ հարսնացուի բաժինն է \*). Սրանից յետոյ բոլորը շուտով ցըւում են։

### ԽՈՆՉԱՆԵՐ.

Նշանադրութիւնից մինչև պսակը տղայի տնեցիները հարսնացուի տնեցիներին նշանաւոր տօներին նուէրներ են ուղարկում և փոխադարձաբար նրանցից էլ ստանում։ Գարնը, մայլսին, փեսացուի քոյրերը և հարսները տանում են իրենց հետ հարսին զբուցներու։

Գլխաւորապէս խոնչաներ ուղարկում են Միջինքին, Զատկին, Նաւասարդին, Համբարձման և այլն։

Միջինչին ուղարկուած խոնչան լինում է ձիթով պատրաստած մի քանի զոյգ գաթայ, մէջը սոսլ լցրած պոլոզ, կարտոֆիլ, սոխ, մի կուլա գինի և մի շիշ օղի։ Բերողին, որ սովորաբար տան փոքրիկներից մինն է լինում մի զոյգ գուլպա են նուէր տալիս և հիւրասիրում են։ Ասլա փեսայի համար զանազան աղանձներ և հալուա ուղարկելով՝ ճաշի են հրաւիրում փեսայի տնեցիներին, բայց ոչ փեսային։ Բոլորը գալիս են, տանը մնում է միայն փեսան, որ գնում է բաժանելու իւր բաժին աղանձը իւր ընկերների հետ։

Մի քանի ժամանակից, երբ խոնչային դարձ են ուղարկում՝ հարսնացուն զարգարում է շշի պարանոցը ուղունքներով և շորից մի գեղեցիկ խցան, գրերանկալիս շինում։

Զատուլին փեսացուի անից մի գառ, մի կարմիր չարզաթվագին կապած, մի քանի կարմիր ձուերով, մրգերով ու մի շիշ օղիով ուղարկում են հարսնացուի տունը։ Աերջինիս հայ-

\*.) Այս զրամները հարսը իւր սեախին» (տես «Զգեստ և զարդ») է կարում։

ըք, եթէ կամենում է հրաւիրել խնամոնց՝ ընդունում է և հրամայում մօրթել գտուք, իսկ եթէ ոչ՝ շնորհակալ լինելով վերադարձնում է գտուք. բայց ձուերը, միրգը, օղին և գտուի զգին փաթաթած չարդաթը—վերջինս լատկապէս հարսնացուի համար է ուղարկում—միշտ պահում են, յետ չեն դարձնում:

Նաևասարդին փեսացուի տնից հարսնացուին ուղարկում են ընկոյզ, մրգեր և մի չարդաթ:

#### Պ Ս Ա Կ.

Ցուր եւ առ կամ թաշլըդ-կտրէք. — Հարսնիքից մի քանի շաբաթ առաջ փեսալի տնից իմացնում են հարսնացուի տնեցիներին, թէ այս ինչ օրը գալու են թաշլըդ կտրելու: Սրանք էլ պատրաստութիւն են տեսնում: Որոշեալ օրը փեսալի տէրը մի քանի բարեկամներով, 8—10 փարչ գինի, 3 փարչ օղի առած՝ գնում են հարսնացուի տունը, ուր հաց են ուտում և փեսալի տնից բերուած գինին ու օղին խմում: Հացից յետոյ երկու կողմն էլ ընտրում են մօտիկ ազգականեներից մի-մի մարդ, որ կոչւում են վարիլ (հաւատարմատար): Ապա սրանք որոշում են, որ աղալի տէրը տայ աղջկալ տիրոջը 10—20 բուրլի: Այս գումարը կոչւում է ծծագին, այսինքն հարսնացուի մօր, աղջկանը տուած ծծի (կաթէ) գինը, որ փեսացուն վճարում է \*): Յետոյ, նայելով թէ հարսնիքը պահնչով պիտի լինի, թէ առանց կանչի՛ որոշում են, որ եթէ կանչով է՝ փեսալի տէրը տայ հարսի տիրոջը 60—70 փարչ գինի, 12—14 փարչ օղի, 10—20 ֆունտ շաքար,  $1/2$ —1 ֆ. թէլ, մի մսացու եզ: Միևնոյն ժամանակ որոշում են հարսներների մօտաւոր թիւը: Իսկ եթէ առանց պահնչի՛ է՝ պարտաւորութիւն է դրւում փեսալի տիրոջ վրալ՝ տալու 15—25 փարչ գինի, 6—7 փարչ օղի, 3—4 փութ միս, 10 ֆ. շաքար,  $1/2$  ֆ. թէլ:

Պատահում է, որ հաւատարմատարները զանազան կէ-

\* ) Այս սովորութիւնը մնացորդ է գնմամբ ամուսնութիւնից:

տերում չեն համաձայնում, այն ժամանակ միւս հրավերեալները միջամտում են: Սակարկութիւնը երկար տևում է; մինչև որ մի կողմը զիջում է:

Աղջկան օժիտ տալու սովորութիւնը Սիսիանում չկալ<sup>8)</sup>՝ այս պատճառով էլ այդ մասին ոչ մի խօսք չէ լինում:

Ապա որոշելով հարսանիքի օրը՝ հրաւիրեալները ցըր- ում են:

Հարսանիքի շաբթին աղջկալ և տղալի տները լաւ մա- քրում են և սիւների ճակատները ալիւրով խաչածեն նախ- շում: Ապա հաց են թխում, միալին ալստեղ ոչ մի տռան- ձին ծէս չեն կատարում, ոչ ալիւրը մտղելիս և ոչ հացը եփելիս, ինչպէս լինում է Զաւախքում և Վարանդայում: Միայն այս մի սովորութիւնն է մնացել, որ հացթուխին նախ քան հաց թխելը մի քանի կոպէկ նուէր են տալիս: Զկալ նաև հանդիսաւոր կերպով հարսին ու փեսալին լողա- ցնելու սովորութիւնը: Արանք այս օրերում իրենք իրենց են լողանում:

Դաշեղքայր կամ քառոր.—Սիսիանում ևս սովորու- թիւն է, որ իւրաքանչիւր գերդաստան ունենում է իւր տահմական քաւորը, որ միշտ միևնոյն գերդաստանից է լի- նում, թէև կարող են անձնաւորութիւնները տարբեր լի- նել<sup>\*\*</sup>): Ետա հազիւ է պատահում և շատ մեծ ամօթ էլ է, որ քաւորին փոխեն: Այսպէս՝ Բռնակոթում Մելիք-Թանգեան- ներն երկու հարկու տարի շարունակ քաւոր են եղել Տէր Յովհաննիսեաններին և գեռ ալժմս էլ շարունակում են:

Քաւորը շատ մեծ յարգանք է վայելում ոչ միայն հար- սանիքի ժամանոկ, այլև ուրիշ դէպքերում: Սանամալրը

<sup>8)</sup> Բացի տաթեցիներից:

<sup>\*\*)</sup> Խաչեղբալրը լինում է նաև կնքահալր:

պատկառելով նրանից՝ երբէք հետը չէ խօսում, ոչ էլ նրանց գոնից անց կենում:

Հարսանիքի պատրաստուելիս՝ նախ և առաջ քաւորին են հրաւիրում, տանելով նրան մի շիշ օղի, մի եփած հաւ և երբեմն, եթէ նու սգաւոր է՝ մի որևէ ընծալ:

Բացի քաւորից՝ պսակի ժամանակ թագուորը իւր ընկեր երիտասարդներից մի փեսազբէր և մի քանի մակարներէ ընտրում, առաջինը միշտ իւր կողքից գնալու, իսկ միւները իրեն ուղեկցելու և իւր հետ ուրախութիւն անելու նպատակով:

Դինեթափէք.—Հինգշարթի օրը փեսալի տէրը, բոլոր պատրաստութիւնները տեսնելուց յետով, հրաւիրում է իւր և հարսի տղամարդ բարեկամներին և թէլով ու ընթրիզով հրւասիրում է նրանց: Ընթրիքին առատութեամբ բաշխում են գինի: Այս հրաւէրը արժմու էլ կոչւում է ոգինեթափէք, որովհետեւ սա մնացորդ է այն սովորութեան, որ հնումը բարեկամները հաւաքւում էին գինին տկերից փարձերի մէջ ածելու: Խնչպիսի գովասանքներով բաց էին անում տկերի բերանը և ինչպիսի բարեմազթութիւններով կոնծում:

Նոյն երեկոյին փեսալի տէրը քահանալին հոգոց է ասել տալիս իրենց բոլոր հին և նոր ննջեցեալների համար: Քահանան հոգոցը աւարտելուց յետոյ՝ դառնում է ժամանորներին և ասում. «Այսինչը հրսանիք է անելու. ասացէք Աստուած հոգիքը լուսաւորէ սրտ հին և նոր ննջեցելոց և շնորհաւոր անէ այս ուրախութիւնը»: Յետոյ դառնալով տղատիրոջ՝ ասում է. «Աչքա լուս լինի, Աստուած արժանացնի թագ ու պատկինա:

Հանդերմօրնէք.—Ուրբաթ օրը առաւօտեան փեսալի տէրը հրաւիրում է քահանալին և իւր բարեկամներին, միմի բաժակ օղի է տալիս և ափսէի մէջ ածած քիշիշ ու մրգեղին հրամցնում: Ապա թագուորը քահանալի և քաւորի հետ գնում է նոր ննջեցեալ ունեցող բարեկամների տները, հոգոց է ասել տալիս, և միմի շիշ օղի տալով իւրաքանչիւր

տան՝ հրաւիրում հարսանիքի։ Սգաւորներն էլ սրանց օղեն խմեցնում, ոմանք էլ հաց ուտեցնում։

Երբ բոլոր սգաւոր բարեկամներին հրաւիրելուց յետով, թագուորը վերադառնում է տուն՝ անմիջապէս կանչում են դաւալներին—տեղական երաժիշտներին, —և 4—10 երիտասարդների, որոնք մատուուակի պաշտօն պիտի կատարեն ճաշի ժամանակ։ Մրանք թուրքերէն բառով կոչվում են «մաղի»։ Երաժիշտներին հաց են ուտեցնում և գինի խմեցնում։ ապատանում նրանց մի բարձր կորան վրայ կանգնեցնում և հրամայում, որ «Ձեզօրօվլի» եղանակը ածեն։ Մրանով տղայի տէրը բոլոր գիւղացիներին հարսանիք է հրաւիրում։ Բացի սրանից, նա առանձին երիտասարդներ ու երեխաներ է ուղարկում գիւղի մէջ շրջելու և բոլորին, առանց խորութեան, հրաւիրելու։ Գիւղացի տղամարդիկ հետզհետէ հաւաքում են և մի քանի շարքերով նստում տան մէջ։ Ամեն մի եկողի անմիջապէս մի գինու բաժակով օղի են տալիս, որ բարեհազմբութիւններ անելով խմում է։ Երբ բոլորը հաւաքում են լինում՝ զաւալները գալիս են տուն և ալսուել են շարունակում ածելի կէսօրին մօտ սաղիները սփռոցներ են ձգում և հաց դնում։ Ամեն մի մարդ 2—4 հաց վերցնում դնում է առաջք։ Յետոյ սաղիները բերում են ափսէների մէջ գրանքափկ, բակլայ, կողքին մի քիչ կարտոֆիլ։ Անմիջապէս քահանան, որ ամենապատուառը տեղն է լինում նստած՝ օրհնում է սեղանը և ընդունելով սաղիի ձեռքից մի գինու բաժակ օղի՝ Ալստուած։ բոլոր ննջեցեալների հոգիքը լուսաւորացնիք ասում է և խմում։ Նրան հետեւում են բոլոր հարսներուները։ Մաղիները մի ձեռքին փարչով գինի, միւսին երկու բաժակ՝ օղի կամ գինի են տալիս։ Մի քիչ ուտելուց յետով, ընտրում են մի սեղանապետ (թամադայ), որի հրամաններին պարտաւոր են անպայման բոլորը հնագանգել։ Եւ առաջին բաժակը նրա կենացն են խմում, բարով կառավարեա մաղթելով։

Ընտրուածը ընդունելով սեղանապետութեան պաշտօնը՝ բարձրացնում է բաժակը և առաջարկում, «Ձուխտ օջաղին,

կենացը, Աստուած էն օջաղէն էս օջաղին խէր տալ։ (բարի տալ)։ բոլորը բաժակները բարձրացնելով միւնոյնը կրկնում են և խմում։ Այս միջացին զաւալներն ամենայն եռանգով ածում են։ Հազիւ բոլորը բաժակները դատարկած են լինում՝ երբ սեղանապետի ձայնը կրկին որոտում է։ «Թագաւորացուի ու հարսնացուի կենացը. Աստուած արժանացնի թագ ու պսակին»։ Չորրորդ բաժակը դատարկւում է բոլոր հասարակութեան կենացը։ Այս միջացին մատուցում է ոսպով շորուարյ Յետոյ առաջարկում են հետևեալ երեք կենացները. կաթուղիկոսի և ո. Եջմիածնի, կալսեր և հայ զինուորների \*) և ի վերջո՛ հայ օտարականների։ Այս եօթ կենացները պարտադիր են և առաջարկելու կարգն էլ խըստութեամբ պահպանուում է։ Սրանցից յետոյ արդէն եթէ կամենում են՝ առաջարկում են զանագան կենացներ։

Ժաշն աւարտելիս քահանան նորից օրհնում է սեղանը. իսկոյն բոլորը սեղմում են ոչ միայն տան տիրոջ, այլև բոլոր հրաւիրեալների ձեռները \*) և միմեանց շնորհակալութիւն լայտնում։ Խոկոյն զաւալները դուրս են գալիս և դռան առաջ կանգնած՝ սկսում են ածել։ Հրաւիրեալները ցըւում են, ոմանք իրենց տները, ոմանք էլ մի մտերիմ բարեկամի մօտ, միասին թէյ խմելու. Հրաւիրեալները ցըւելուց յետոյ սաղիներն ու երիտասարդներն են հացի նստում։ Աղջիկներն ու հարսները ներկայ են լինում սրանց ուրախութեան։ Պարն և ուրախութիւնը գնալով սաստիանում է։

Երեկոյեան դէմ հարսնացուի տնից 2—4 մարդ գալիս են փեսացուի տունը և խնդրում «Հարկը», ալսինքն ալն ինչ որ որոշել են առուրեատին ժամանակ։ Նատ անդամ պատահում է, որ փեսացուի տէրը լիովին չէ տալիս, ինչոր այն օրն որոշուել է, և կամ վատը, հասարակն է ուղարկում։ Այսպիսի գէպքերում պատահում է, որ հարսնացուի

\*) Հայ զինուորների կենացը սկսել են խմել վերջին ժամանակներում, երբ զինուորագրութիւնը մուտք գործեց հալերի մէջ. իսկ կալսեր կենացը խմում են ամելի վաղ ժամանակից.

\*\*) Այս սովորութիւնը նորամուռ է։

տէրն առանց դժգոհութեան ընդունում է. բայց նոյնպէս պատահում է, որ ոչ միայն իւր դժգոհութիւնն է լարանում, այլև և իրերը յետ է ուղարկում, պահանջելով լաւն ուղարկել կամ լրացնել:

Հարկը տանելուց յետոյ երիտասարդները քաւորի և թագուորի հետ զաւալների առաջնօրդութեամբ մի մասցուեղ են տանում հարսնացուի տունը: Եզի յետեփց գնում է մասգործը, գտնակը ձեռքին բռնած: Պատահում է, որ եզի վիզը զարգարում են մի շարոց խնձորներով: Հարսնացուի գուանը բաւականաչափ աճելուց յետով՝ մասգործը վայր է գլորում եզը և քաւորից մի բուրքի նույէր ստանալով՝ մորթում է: Կողպէք կողպելու և կամ թել հանգուստելու սովորութիւնը, որ ընդհանրացած է Վարանդայում և Զաւախքում՝ այստեղ չկտր: Այս եզի կէսը տարւում է փեսացուի տունը:

Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ քահանան փեսացուի բարեկամների հետ նորից գալիս է տղայի տունը: Այստեղ հարսի հանգերձը, որ թթեթ է կոչւում, մի սկզբանեղի վրայ դրած առաջ են բերում: Այս հանգերձը, որ փեսացուի տէրն է պատրաստել տալիս և ընծալում հարսնացուին՝ բարկանում է հետևեալ կտորներից: մի քիւրք, մի շապիկ, մի գօտի, մի չարգաթ և մի զորդ կօշիկ: Սկզբանեղի վրայ դրած է լինում նաև մի գրւխ շաքար և մի ֆունտ թէլ: Երբ սկզբանեղը գնում են քահանայի առաջ՝ թագուորը վերցնում է իւր գլխարկը և դնում վերան, քաւորն էլ իւր թուրը պատեանով երկարացնում է գդակի կողքին: Ապա թագուորը, քաւորը և փեւաղը ըստում են սկզբանեղի առաջ և այսպէս սպասում, մինչև որ քահանան օրհնում է հանգերձը: Ապա թագուորը վերցնում է իւր գլխարկը, ծածկում, իսկ քաւորը առնում է իւր սուրը և ձեռքում բռնում: Ափսէն էլ վերցնում է քաւորի մի ազգականուհին (հարսը կամ քոլը): Սափրելու ծէսը.— Հանգերձօրհնէքից յետոյ գալիս է սափրելը թագուորի մօրուքը սափրելու: Թագուորը հանգիստաւոր կերպով բազմում է մի աթոռի վրայ, տան մէջ տեղը:

մակարները մոմեր վառած շրջապատում են նրան։ Քաւորը մի մոմ ձեռին՝ կանգնում է թագուորի կողքին և աջ բռի մէջ գինի ածում։ Սափրիչը մատը թաթախելով այս գինու մէջ՝ քսում է թագուորի մօրսւքին և ապա, նախ քաւորից և յետոյ մակարներից մի քանի կոպէկներ տռնելով՝ սկսում է սափրել։ Իւրաքանչիւր նուէր տուող հրամայում է իւր տռած նուէրի համեմտա սափրել և սա էլ, եթէ նուէրը մեծ է՝ շատ տեղ է սափրում, իսկ եթէ փոքր՝ քիչ։

Սափրելու ծէոր կատարելուց յետոյ մակարները վառում են երեք ջահ (մաշալլա), հարսի հանդերձի սկսուտեղը գնում քաւորի հարսի կամ քրոջ գլխին և զաւալների առաջնորդութեամբ, պարելով ու երգելով, ահազին ազմուկով գնում են հարսի տունը։ Առաջները հինայ էլ էին տանում, մի հարսի կամ աղջկալ գլխի գնելով, բայց այժմ այս սովորութիւնը գերացել է։ Հարանացուի տնեցիները ընդառաջ են ելնում սրանց, մի զորդ գուլպալ կամ մի նաշլուխ նուէր տալիս սկսուտեղը բերողին և վերցնում սկսուտեղը։ Ապա ըոլորին ներս հրաւիրում։

Պսակ գլուխլ։—Ուրբաթ երեկոյին թագուորի և հարսի բոլոր բարեկամները նորից ժողովում են հարսի տունը և ուրախութիւն են տնում մինչև լուս, թէլ խմում, ընթրում, պարում, երգում։ Լուսաբացին հրաւիրում են քահանային պսակ գնալու։ Սա գալիս է և այստեղ կրկին օրհնում տղայի տանը օրհնած հարսի հանդերձը և յետոյ մաշտոցը գնում սկսուտեղի վրայ, որ հարսնեորները համբուրեն և խաչահամբոր ձգեն։ Ապա երկու հարս վերցնում։ Են հանդերձը և տանում տան-օթազզը հարսին հազցնում։ Երբ աւարտում են՝ ներս են հրաւիրում քաւորին, որ հարսի գօտին կապէ։ Սա նուէր տալով հարսի շորերը հագցնող հարսներին՝ վերցնում է գօտին, փաթաթում և երեք անգամ հարսի գլխովը ձգում ու ապա գետնից վերցնում ասելով։ Անառած տալ աղարեր սնամեր ինես, ստակալուքը խէր ընի և յետոյ կտպում։

Ապա մի տղամարդ, որի կինը չըերք չէ, բռնում է

Հարսի ձեռից և տան-օթաղից բերում տուն։ Խոկոյն քահանան կանգնեցնում է նրան թագուորի մօտ և սկսում է պստի կարգը կատարել։ Երբ որոշեալ մասն աւարտում է՝ բոլորը շարժում են դէպի եկեղեցի։ Հարս ու թագուորը բռնում են իրար ձեռք, թագուորի աջ կողմից գնում է քաւորը, իսկ ձախից փեսաղըէրը։ Հարսի աջ կողմից հարամաքոյրը, իսկ ձախից հարսնաղըէրը \*). Մակարները շրջապատում են սրանց, զինուած հրացաններով և ատրճանակներով։ նանապարհին սրանք երգում, պարում, խմում և հրացան ու ատրճանակ են արձակում։ Ղաւալները հանգիստար գնացքի սռաց սռացն ընկած ածում են։ Բոլոր զիւղացիները միանում են գնացքին։

Վերջապէս համառում են եկեղեցի։ քաւորը փող է տալիս ժամկոչին, որ եկեղեցու գուռը բանար Բազմութեան մեծ մաօր մտնում է ներս, իսկ փոքրագոյն մասը, զաւալների հետ մնում դրսում։ Քահանան խօստովանեցնում է Հարս ու թագուորին, հարցնում է նրանց փոխաղարձ համաձայնութիւնը, ապա սկսում է խորհուրդը կատարել։ Թագաւորը և թագուհին գլուխ գլխի տուած կանգնում են, քաւորը մի ձեռով թուրը պատեանում, միւսով խաչն ու աւետարանը, մի թաշկինակի մէջ փաթաթած՝ բռնում կամ ուղղակի գնում է նրանց գլխներին։ Եւ երբ քահանան չսգեցնում է պսակուող զոյգին ու իւր շուրջառը նրանց վըրալ է ձգում՝ թագուորը ծածուկ մի քանի արծաթի դրամներ է տալիս թագուհուն։ Երբ աւարտում է պսակի խորհուրդը՝ քահանան վրայից շուրջառը յետ առնում՝ թագուորի վրալ է ձգում և աւետարանը տալիս է ձեռքը, Հարսին էլ կանգնեցնում նրա կողքին, խաչը ձեռքը տալիս և հրաւիրում է հարսներներին, որ գան խաչն ու աւետարանը համբուրին և խաչահամբոյր ձգեն։ Ալսաեղ նա

\*.) Հարսին ընկերակցում են հարսի քոլը և եղբայրը և կամ սրանց փոխարէն՝ ուրիշ մօտիկ աղղականներ, որոնք կոչւում են հարսնաքուր և հարսնաղըէր։

ամեն միջոց գործ է գնում, որ բռլորն էլ խաչամբոյր ձգեն: Աերջապէս շարժւում են դէպի տուն: դաւաները դարձեալ առաջ են գնում, մակարները պարելով, երգելով և հրացաններ արձակելով ուղեկցում են թագուորին, որի փեղից բռնած՝ ծանր քայլերով հետեւում է նրան հարսը: Այս նշանակում է, որ նա այլ ևս թագուորին հաւասար չէ, այլ նրան սասորագրուած և պարտաւորուած հետեւելու նրան: Վերադարձին բարեկամ տների առջևից անցնելիս՝ տնեցիները սուղան են դուրս բերում: Եղ ու մեզը, եղածու, հալուար, գինի, օղի են բերում, մի երկու պատառ հրամցնում թագուորին, իսկ մնացածը բաժանում հարսնեորներին:

Դնացքը ծանր քայլերով գալիս հասնում է դարձեալ նորահարսի տունը: Այստեղ էլ սեղան են դուրս բերում, գինի, օղի խմեցնում հարսնեորներին և ներս հրաւիրում: Հարսը էլի գնում է տան - օթախը, իսկ թագուորը կամ խառնուում հարսնեորներին և կամ սաղիների հետ միասին ծառալում սեղանին, որ շուտով ձգուում է: Մատուցանում են բուլլամա<sup>\*)</sup> և բոզբաշ: Նաշը կառավարում է թագուորի տանը հանգերձօրհնէքի ժամանակ ընտրուած թամադան, որ առաջարկում է վերև լիշտ եօթը կենացները: Երբ ճաշը աւարտւում է՝ սեղանապետի կարգադրութեամբ քահանալին մի օրհնանքաթաս: Են տալիս: Քահանան խմում է այս գինու բաժակն էլ և օրհնում սեղանը, որից լետոյ հարսնեորները ցրում են իրենց տները կամ գնում են մօտիկ բարեկամի մօտ քէֆը շարունակելու: Յետոյ հացի են նըստում սաղիները փեսալի հետ միասին, ինչպէս և հարսը առանձին իւր մի քանի ընկերուհիների հետ: Հաց են ուտում նաև հրաւիրեալ կանալք, առանձին նստած:

<sup>\*)</sup> Մանր կտրատած միսը կոտորած սոխի, ալուչալն, կարմիր պղպղով և զգումի հետ շերտ-շերտ զարտում են մի կաթսալում, մի քիչ ջուր ածում և լետոյ կաթսալի բերանը ծածկում ու խմորով փակում, զոլորչին դուրս զալու համար միայն մի փոքրիկ բացուածք թողնելով: Ապա կաթսան իջեցնում են թոնիրը, ուր կամաց-կամաց եփուում է:

Հացից յետոյ մակարները դուրս են գալիս, զաւալները ածել տալիս և պարում, գօտեմարտում, երգում (միշտ թուրքերէն): Սա տևում է մինչև երեկոյ, երբ թագուորը մտերիմներն առաջ դառնում է հարսի տունը, թէլ խմում և հաց ուտում: Ուշ գիշեր մակարները ցրւում են, թողնելով թագուորին իւր քտորի և մի քանի մտերիմների հետ միայնակ: Այս ժամանակ զոքանչը փլաւ է բերում իւր փեսային, որ բոլորովին ազատ ուտում է իւր քաւորի և մտերիմների հետ: Այս փլաւը կոչւում է «Ենթռնահաց»:

Հարսը տանել: —Կիրակի առաւտեան վաղ բոլոր հարսներները նորից հաւաքւում են հարսի հօր տունը, նախաճաշիկ անում և ապա պատրաստում հարսին տանելու թագուորի տունը: Երբ հարսին տան-օժախից տուն են բերում՝ հայը բռնում է նրա ձեռից և տալով թագուորի հօրը՝ ասում: «Ժուայ քու որդուտ, Աստուած խէր տայ, բարով վայելուին: միայն թէ ամանաթս լաւ պահպանես, պատուով պահես, ընդունես:»

— «Ենքն մնաս, պատասխանում է թագուորի հայրը, հարկ է, այսուհետեւ մեր որդին է, աչքի լուսի պէս կը պահպանենք»:

Հարսը խոնարհւում, համբուրում է իւր հօրն ու մօր ձեռքը և ապա իրենց թռնրի շուրթը: Այս ժամանակ թագուորը համբուրելով բոլոր ծերունի հարսներների ձեռները և միւսների հետ ձեռք տալով՝ գալիս է և հարսի մօտ կանգնում: Հաւալներն ու մակարները ձայները ձգում են և պարով, երգով, հրացանի թնդիւնով տանում հարս ու թագուորին վերջինիս տունը: Նաևնապարհին պատահող տներից ասեղանները են գուրս բերոււմ:

Երբ հասնում են թագուորի տանը՝ մինը կտուրն է բարձրանում և այնտեղից քնկոյզ, կաղին (տկողին), շագանակ, երբեմն էլ գազար շաղ տալիս: Հարսներները իրար են խառնում և միմեանցից խլխում: Դուրս է գալիս սկեսուրը, երեք պտոյտ անում հարս ու թագուորի շուրջը, ապա համբուրում թագուորին ու թագուհուն և ներս հրա-

ւիրում: Եւ երբ տեսնում է, որ հարսը չէ ուզում ներս  
մտնել՝ մի ընծալ է տալիս և տանում նրան տան-օթախում  
տառանձնացնում: Մինչդեռ հարսներները ներս են մտնում  
և տանը ծոլապատիկ նստուտում՝ սկեսուրը մի տղալ գրկած  
տանում է և հարսի գիրկը տալիս, որպէսզի սա տղալ (արու)  
քերէ:

Անմիջապէս սփռոցները ձգում են և բոլոր տղամարդ  
հարսներներին հաց տալիս: Միևնոյն թամադալի առաջար-  
կութեամբ խուռմ են միևնոյն եօթը կենացները: Տղամարդ-  
կանցից յետով հաց են տալիս կանանց և ծառայող երիտա-  
սարգներին: Ապա բոլորը ցրւում են աները:

Կանչ.—Երկուշարթի առաւտա զաւալները նորից հըն-  
չում են գիւղի մի բարձր տան կտրից և հրաւիրում գիւղա-  
ցիներին հարսնքատուն: Բոլորն շտապում են գալու, որ-  
պէսզի պատուական խաշն՝<sup>\*)</sup> ուտենի Խաշը ուտելուց յետով,  
հարսներները ցրւում են և դրամի պատրաստութիւն տե-  
սնում: Կէսօրին մօտ նորից հաւաքւում են և ճաշի նստում:  
Մատուցանում են բուլղամալ և եայնի: Նոյն կերպ, նոյն  
եօթը կենացները գարձեալ խուռմ են:

Խաշից յետով սկսում է կանչը. Թմբկահարը գնում է  
թմբուկը թագուորի հօր (կամ տիրոջ) առաջ և մօտը կան-  
գնում: Ապա մօտի մարդկէը հարցնում են թագուորի հօրը,  
թէ ով է նրա առաջին բարեկամը: Սա էլ անուանում է  
մինին. այս ժամանակ այս վերջինս մի քանի բուրդի տալիս  
է թմբկահարին: Մօտ նստողները նայում են, և եթէ քիչ է  
պինում՝ ստիպում են, որ աւելացնէ: Թմբկահարը ստանալով  
փողը՝ բարձրացնում է վերև, ցոյց տալիս բոլորին և գնելով  
թմբուկի վրայ՝ բարձր ձայնով գոյսում է.

ԱԼԱԵՑՔ, ալ ջամահատ (ժողովուրդ), թագաւորին այս-  
ինչ բարեկամը կանչեց թագաւորի սէրին ալսքան (20—1)

<sup>\*)</sup> Սա պատրաստում են եղան սոներից և լաւ մաքրած ստա-  
մբախից ու աղիքներից, մի ամբողջ գիշեր եփելով, ալնոէս որ ու-  
կրահան է լինում: Սա շատ համեղ է և բոլոր գիւղացիների ախոր-  
ժած կերակուրը:

մանէթ. իրեն ազապին (ոչ ամուսնացած) էլ փոխ ինի, առունը շէն, շէն կենալ:

Բոլորը կրկնում են. «ԵՇՆ կենալ: Ապա թագուորի հայրը անուանում է իւր երկրորդ բարեկամին, որ և տալիս է իւր նուէրը: Այսպէս շարունակում է՝ մինչև որ բուռը ներկալ եղողները, (և մինչև անգամ բացակաները՝ մի որևէ մարդու միջոցով) նուէրներ են տալիս: Երբ աւարտում են՝ թմբուկի վրայից վերցնում են բոլոր գրամք, հաշում և տալիս թագուորի հօրը: Այս կանչից գոյանում է 100—300 բուրյի, որ փոխարինում է նրա արած գրեթէ բոլոր ծախսները: Միայն թէ պարտաւորութիւն է դրուած, որ այս գերդաստանն էլ ժամանակի ընթացքում հետզհետէ վերադարձնէ այդ գումարը տուողներին, մասնակցելով նըրանց կանչերին:

Կանչից յետոյ սեղանին ծառայող մարդիկն էլ հաց են ուտում և բոլորը ցըւում են, բացի մակարներից: Այս ժամանակ մօտիկ բարեկամները մակարներին ճբաղք են բերում: «Բաղք» լինում է մի ափսէի մէջ լցրած չամիչ, ֆշատ, մըրգեղէն, խնձոր՝ վրան մօմ վառած, գաթայ, եփած հաւ, զանգան գոյնին ներկած հաւկիթներ, մարդի և այլ ձերի իւղի հացեր և այլն: Մակարները մի առ մի բոլորին այս բաղերը ցոյց տալով բարձր կանչում են, թէ ով բերեց, և իրենց շնորհակալութիւնը յալտնում, «ԵՇՆ կենալ, շէն» բղաւելով: Մինչև կէս գիշեր և երբեմն շատ աւելի ուշ այս մակարները զաւալների ներդաշնակութեամբ պարում են, երգում, հանաքներ անում, գրաղերը ուտում: Վերջապէս երբ կամենում են ցրուել՝ աւելացած ըբաղերը բաժանում են իրենց մէջ, մինչդեռ առաջները մինը վերցնում էր և ցըիւ տալիս սրանց մէջ: Սրանք էլ ահազին աղմուկով, միմեանց հրելով, խփելով հաւաքում և միմեանց ձեռքից խըլ-խլում էին:

Հետևեալ օրը, եթէ թագուորի հայրը գոհ է կանչից գոյացած գումարից՝ հրաւիրում է կանչին մասնակցողներին

և ճաշ տալիս, իսկ եթէ գժգոհ է՝ տէրը չէ լինում, անուշադիր է դանում:

Թագ-վերացում. — Երեքշաբթի օրը, երբ հարսնեառները կրկին հաւաքւում են հաց ուտելու՝ հրաւիրւում է նաև քահանան, որպէսզի թագը վերցնէ: Ալխաթեան գիւղում նախ քան թագի վերացումը հարսը սփսորի է կանգնում: — վերցնում է աւելը, տան մէջ մի քիչ տւելում և ապա մի ափսէ ձեռին՝ աղբի կոյտի մօտ կանգնում: Տնեցիները և բարեկամները դրամներ են ձգում ափսէի մէջ:

Թագ վերացնելիս զգուշանում են, որ չորեքշաբթի, ուրբաթ կամ կիրտկի չլինի: Մինչգեռ քահանան կատարում է արարողութիւնը՝ քաւորը սուրն ու պատեանը խաչաձերնում է հարս ու թագուորի գլխին: Առաջները սովորութիւն է եղել, որ հարս ու փեսին մէջք մէջքի տուած չոգեցնելիս են եղել. բայց այժմ այդ սովորութիւնը վերացել է:

\* \* \*

Նոյն երեկոյին առաջաստ են մտնում: Անկողինը ձգում են տան օթախում և մօտը գնում մեզը, հաւ, գինի: Սովորաբար սաւան ձգում են. սակայն ապացուց չեն պահանջում:

Յաջորդ, չորեքշաբթի օրը, հարսը վաղ վեր է կենում. ջուր տաքացնում և անեցիների ստները լուանում, զգուշանալով նախ ձախը չլուանալու, որպէսզի ձախորդութիւնը չպատէ: 5—10 կոսպէկ նուէրներ են ձգում տաջտի մէջ:

Մի քանի օրից յետոյ հարսի տանից ուղարկում են նրա հին շորերը, որ նա ստանում է՝ նախապէս մի զորդ գուլպայ նուէր տալով բերողին:

### Շ Ա Խ Ս Ը.

Սովորաբար աղջկայ կողմից շատ քիչ ծախս է լինում, իսկ միջակ դրութեան տղալի կողմից մօտաւորապէս ալսչափ.

## ա) Նշանդըէքին.

Մի թուլի *).	.	.	.	.	.	.	2 - 3	ր.
Մի խոլ *	.	.	.	.	.	.	5 - 6	ո
Դինի և օղի *	.	.	.	.	.	.	3 - 6	ո
Դարձեալ դինի *	.	.	.	.	.	.	5 - 6	ո
" օղի *	.	.	.	.	.	.	4 - 5	ո
Մի գլուխ շաքար.	.	.	.	.	.	.	4 - 5	ո
Մի ֆունա թէլ *	.	.	.	.	.	.	1 - 1	ո
Զամիչ և չոր մրգեղէն	.	.	.	.	.	.	2 - 3	ո
Մատանի	.	.	.	.	.	.	5 - 10	ո
Արկու և ախա ***).	.	.	.	.	.	.	6 - 8	ո
Մի դոչէն զ ***)	.	.	.	.	.	.	10 - 15	ո
Մի արծաթ մանէթ	.	.	.	.	.	.	1 - 1	ո
Բահանալին.	.	.	.	.	.	.	1 - 1	ո
							<u>49 - 70</u>	ր.

## բ) Տարուայ ընթացքում.

Հարոնացուին նուէքներ. . . . . 10 - 15 ր.

## գ) Հարսանիքին.

Դինի.	.	.	.	.	.	.	30 - 60	ր. *****)
Օղի	.	.	.	.	.	.	20 - 50	ո
Երեք եղը	.	.	.	.	.	.	40 - 45	ո
Քահանապին	.	.	.	.	.	.	2 - 3	ո
Լկեղեցուն	.	.	.	.	.	.	1 - 1	ո
Աթուահաս.	.	.	.	.	.	.	5 - 8	ո
Շաքար, թէլ	.	.	.	.	.	.	5 - 7	ո
Մի մոթալ պանիր	.	.	.	.	.	.	4 - 6	ո
Հարսին զգեստ	.	.	.	.	.	.	30 - 70	ո
Սծագին.	.	.	.	.	.	.	10 - 20	ո
Դափ ու զուռնու.	.	.	.	.	.	.	5 - 7	ո
Հացի ծախսեր	.	.	.	.	.	.	10 - 15	ո
Մանր ծախսեր	.	.	.	.	.	.	10 - 15	ո
							<u>172 - 322</u>	ր.

Ընդամենը. . 231 - 392 ր.

Այս է տմունութեան ըոլոր ծախսը միջակ կարողութիւն ունեցող գերգաստանի համար: Թէև գումարը մեծ է երկում՝ բայց «կանչի» միջոցով հարսնեղները վճարում են գրեթէ բոլորը:

\* ) Կէս տարեկան զառն:

\*\*) և \*\*\*; Տես Զգեստ և զարդ:

\*\*\*\*) Կախուած է հարսնեղների թուից: